

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՄԻ ՄԵՋԲԵՐՍԱՆ ՇՈՒՐՋ  
(«Այսոցիկ վկայէ և Կեփաղիով...»)

ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆ

Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» մեջ ուշագրավ է I գրքի 5-րդ գլխում Կեփաղիոն պատմիչի հիշատակումը, որին հետևում է նրա կորած «Պատմութունից» մեջբերումը: Այդ հատվածն ուրիշ աղբյուրից հայտնի չէ, պահպանվել է Խորենացու շնորհիվ: Կեփաղիոնը (Κεφαλαίων) ապրել է Ագրիանոս կայսեր օրոք, մ. թ. 1-11 դարերում: Գտնվելով Սիկիլիայում՝ նա գրել է ինը գրքից (կոչված Մուսանների անուններով) բազմապատկեր ճանաչման մի պատմություն (Ասորեստանի թագավոր Նինոսի ժամանակաշրջանից մինչև Ալեքսանդր Մակեդոնացի), որից մեզ հասել են միայն հատվածներ՝ գլխավորապես Եվսեբիոս Կեսարացու, Հովհաննես Մալալասի և Գեորգիոս Սինկելլոսի միջոցով: Կեփաղիոնի մասին հայ պատմագրի այս վկայության վերաբերյալ մասնագիտական դրականություն մեջ որոշիչ է եղել XIX դարի գերմանացի նշանավոր արևելագետ Ա. Ֆոն Գուտշմիդի կարծիքը: Կոնկրետ փաստարկներ բերելով՝ նա անվավերական է համարել Խորենացու մեջբերած հատվածը՝ եզրակացնելով, որ Մովսեսն այն հնարել է Եվսեբիոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանության մի նախադասության (որը նույնպես քաղվածք է Կեփաղիոնի գրքից) օգնությամբ<sup>1</sup>: Հետևաբար մեջբերումն աղբյուրագիտական առումով որևէ արժեք չունի: Այս պատճառով Ֆ. Յակոբին հին հունական պատմագրության՝ պահպանված հատվածների իր հրատարակության մեջ<sup>2</sup> (և այլուր<sup>3</sup>) Գուտշմիդի հետևությունները Խորենացու մեջբերումը Կեփաղիոնի գրվածքից համարում է կեղծիք (ի տարբերություն նմանատիպ նախորդ ժողովածուի՝ *Fragmenta Historicorum Graecorum*-ի հրատարակիչ Կ. Մյուլլերի, որն, այլ հեղինակների քաղվածքների հետ հավասար, լատիներեն թարգմանությամբ ներկայացրել է նաև Խորենացուն, որպես Կեփաղիոնի շարադրանք<sup>4</sup>):

Խորենացիագետները, Գուտշմիդի եզրակացությունը փաստորեն համարելով վերջնական, անհրաժեշտություն չեն տեսել այն վերանայելու, այլ բավարարվել են ավելի կամ պակաս ճշգրտությամբ նրա կարծիքը

1 A. v. G u t s c h m i d. Über die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des Moses von Khoren. – *Berichte über die Verhandlungen der königlichen sächsischen Gesellschaft der Wissenschaften zu Leipzig, Phil.-Hist. Classe*, 1876, N 28, S. 27–28.

2 F. J a c o b y. Die Fragmente der griechischen Historiker. Berlin (Leiden), 1923–(այսուհետև՝ *FGrHist*), Bd. II (1926), 93 (Bd. II C, S. 298).

3 Realencyclopädie der klassischen Altertumswissenschaft, edd. A. Pauly, G. Wissowa, W. Kroll. Stuttgart, 1893–, Bd XII (1921), s. v. Kephalion, col. 192 (Jacoby).

4 C. M u l l e r. *Fragmenta Historicorum Graecorum*. Paris, 1841–1870 (այսուհետև՝ *FHG*), v. III, p. 627, f. 2.

կրկնելով: Մինչդեռ, ինչպես կտեսնենք ստորև, գերմանացի գիտնականի փաստարկները, առաջին հայացքից տրամաբանական թվալով հանդերձ, իրականում անընդունելի են և չեն տալիս խնդրի լուծման բանալին:

Եվսերիոսի «Ժամանակագրությունը» Կեֆալիոնի՝ խորենացու վկայակոչման միակ աղբյուր համարել են Գ. Ջարպահանյանը<sup>5</sup>, Գր. Խալաթյանը<sup>6</sup> և Ա. Ջամինյանը<sup>7</sup>: Ստ. Մալխասյանը դրում է, թե խորենացին «Հիշում է... Կեֆալիոնին... Եվսերիոսի ժամանակագրության միջոցով և ոչ անմիջապես»<sup>8</sup>, նաև՝ «Կեֆալիոնին Հիշում է Եվսերիոս Կեսարացին և նրանից քաղվածքներ անում: Խորենացին էլ՝ Եվսերիոսից»<sup>9</sup>: Նույն կերպ է մտածում Մ. Արեղյանը. Կեֆալիոնի դրվածքն, ըստ նրա, «խորենացին ձեռքի տակ չի ունեցել, այլ օգտվել է Եվսերիոս Կեսարացու «Քրոնիկոնից», որովհետև ինչ որ նա բերում է, կա այս գրքի մեջ»<sup>10</sup>: Ռ. Թոմսոնը նույնպես նշում է, որ խորենացու «Պատմությունը» մեջ «Կեֆալիոնի Հիշատակված է... Եվսերիոսի միջոցով (I 5, 18)»<sup>11</sup>: Հարցի վերաբերյալ տարբեր է նաև Գ. Սարգսյանի<sup>12</sup> ու Մահենների կարծիքը. վերջիններս նույնիսկ ծանոթագրում են, թե Կեֆալիոնի՝ մեզ հետաքրքրող հատվածը մեջբերված է Եվսերիոսի «Ժամանակագրության» մեջ<sup>13</sup>: Մասնագետներն անուշադրություն են մատնել Գուտշմիդից տասնամյակներ առաջ Վ. Լանգլուայի արած գիտողությունը, թե խորենացու մեջբերումը Եվսերիոսի «Ժամանակագրությունից» անկախ է<sup>14</sup>:

Գիտնականների կողմից գրեթե միաձայն ընդունված տեսակետին հակառակ մոտեցման ծայրահեղ արտահայտություն պետք է համարել Հրանա Ք. Արմենի եղրակացությունը: Նա վստահ է, ընդ սմին որևէ էական փաստարկ չբերելով, որ խորենացին բնագրով կարդացել է Կեֆալիոնին<sup>15</sup>:

Ձ. Տրայինան 1991 թ. հրատարակած իր դրքում դեռևս չի կասկածում, որ խորենացին Կեֆալիոնի խոսքերը մեջբերել է Եվսերիոսի միջոցով:

5 Գ. Ջարպահանյան և Կ. Պատմությունը հայ հին դպրութեան (ԴժԳ դար) վեներիկ, 1932, էջ 355:

6 Г. Халатян ц. Армянский эпос в "Истории Армении" Моисея Хоренского. Ч. 1. М., 1896, с. 146.

7 Ա. Ջամինյան և Կ. Հայ դրականության պատմություն. Նոր-Նախիջևան, 1914, էջ 112:

8 Մովսես Խորենացի. Հայոց պատմություն, թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ դոկտոր Սա. Մալխասյանի. Երևան, 1940, էջ XXXII:

9 Նույն տեղում, էջ 261:

10 Մ. Արեղյան. Հայոց հին գրականության պատմություն. — Երկեր, հ. Գ. Երևան, 1968, էջ 291–292:

11 Moses Khorenats' i. History of the Armenians. Translation and Commentary on the Literary Sources by R. W. Thomson. Cambridge (Mass.). London, 1978, p. 14.

12 Мовсес Хоренаци. История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна. Ереван, 1990, с. 220.

13 M o i s e d e K h o r e n e. Histoire de l'Arménie. Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé. Paris, 1993, p. 329.

14 V. L a n g l o i s. Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren. Paris, 1861, p. 317–318.

15 Հրանտ Ք. Արմեն. Խորենացին և աղբյուրներու ընտրությունը. — «Պատմա-բանասիրական հանդես», 1964, N 4, էջ 215:

գուլթյամբ ("mediata dal *Chronicon eusebiano*")<sup>16</sup>: Բայց մեկ տարի անց նա արդեն նշում է, որ իր կարծիքով Կեսարացու «Ժամանակագրության» Գուտչմիդի մատնանշած նախադասությունն ամենևին էլ խնդրո առարկա հատվածին «չատ նման տեղ» ("ganz ähnliche Stelle") չէ<sup>17</sup>: Այս դիտարկումը նա ամրապնդում է խորենացուն նվիրված իր վերջին ուսումնասիրությունում մեջ<sup>18</sup>: Ջ. Տրայինյան Կեֆալիոնի խոսքերը դիտում է որպես ուշ անտիկ պատմագրությանը հատուկ մեթոդաբանական մի սկզբունքի մասին վկայություն, «աքսիոլոգիկ» այն չափանիշի արտահայտություն, որով առաջնորդվում էին սլատմագիրները՝ անդրադառնալով միայն երևելի անձանց գործունեությունը: Որպես Կեֆալիոնի «Պատմության» այս հատվածի նախորինակ, իտալացի հայագետը մատնացույց է անում Դիոդորոս Սիկկիացու «Պատմական գրադարանից» մի հատված, որտեղ հեղինակը նշում է, թե ոչինչ իրեն չի ստիպում գրել այն թագավորների մասին, որոնք չեն առել հիշարժան (*μνημης ἄξιον*) գործեր:

Ջ. Տրայինյանից անկախ, մենք նույնպես ուշադրություն ենք հրավիրել այն հանգամանքի վրա, որ խորենացին Կեֆալիոնի կորած երկից մեջբերում է կատարել ոչ թե Եվսեբիոսի «Ժամանակագրության» միջոցով, այլ կամ անմիջականորեն, կամ էլ, որ ավելի հավանական է, մեկ ուրիշ, անհայտ աղբյուրի օգնությամբ<sup>19</sup>: Հատվածի բովանդակությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ այն վավերական է, այլ ոչ թե հորինված կեսարացի հեղինակի միջոցով: Փորձենք սլարդաբանել: Խորենացին Կեֆալիոնի «Պատմությունից» քաղվածք է կատարում՝ ի հաստատումն իր մինչ այդ դրածի (մասնավորապես՝ Աբիդենոս պատմագրին իր վերագրած հայ յոթ նահապետների ցանկի), սկսելով այսպես. «Այսոցիկ վկայ է և Կեֆալիոնի»: Սակայն մեջբերումն իրականում բնավ չի հաստատում նրա նախորդ խոսքերը, և ավելին՝ դրանց հետ միայն հեռավոր կապ ունի: Եթե խորենացին այստեղ հակված լիներ ուրիշ հեղինակներից քաղվածքներն իր նպատակին հարմարեցնելու, ապա Կեֆալիոնի դրածը կձևափոխեր այնպես, որ իրոք հաստատեր իր վկայությունը և էլ ավելի հավաստիությունը օժտեր հայ յոթ նահապետների ցանկը: Մինչդեռ նա այդպես չի վարվում, այլ մեջբերումն անում է առանց որևէ փոփոխություն՝ չմտահոգվելով, որ այն ամենևին էլ չի «վկայում» իր ուղածը:

Պետք է նաև հաշվի առնել, որ խորենացին տարբեր աղբյուրներից տեղեկություններ կամ իր շարադրանքը ռճավորելու նպատակով հատվածներ, արտահայտություններ քաղելիս այդ անում է ավելի կամ սրկաս չափով բառացի, առանց դրանք էսպես, առավել ևս՝ անճանաչելիորեն փոխելու. և նման գեպքերում ղուգահեռներն ակներև են լինում ու նկատվում

16 G. T r a i n a. Il complesso di Trimalcione (Movses Xorenac'i e le origini del pensiero storico armeno). Venezia, 1991, p. 53.

17 Ջ. Տրայինյան. Մովսես խորենացիի «հասական» ավանդությունը Հայոց Պատմության Ա գրքի 5-րդ գլուխին մեջ. «Պատմա-բանասիրական հանդես», 1992, N 1, էջ 32:

18 G. T r a i n a. Materiali per un commento a Movses Xorenac'i. Patmut'wn Hayoc'. I. – *Le Museon*, 108 (1995), p. 309–310.

19 Ա. Թոփչյան. Մովսես խորենացու հիշատակած հունական մի քանի աղբյուրների մասին. «Աշտանակ» (հայագիտական պարբերագիրք), Ա. երևան, 1995, էջ 81–83:

հեշտությամբ: Որպեսզի ավելի հստակ երևա, որ Գուտշմիդի առաջարկած լուծումը բռնազբոսիկ է, մեջբերենք Խորենացու «Պատմության» և Եվսեբիոսի «Ժամանակագրության» համապատասխան հատվածները (նաև չմոռանանք, որ Գուտշմիդը հայերենին չէր տիրապետում և Խորենացուն կարդացել է լատիներեն ու ֆրանսերեն թարգմանություններով): Խորենացի (I, 5). «Այսոցիկ վկայէ և Կեֆաղիովն. քանզի ասէ ի միում գլխոցն այսպէս. «Մանր զամենայն ի սկզբան մերոյ աշխատութեանս սկսաք գրել զազգաբանութիւնսն ի գիւանացն արքունի. այլ առաք հրաման ի թագաւորաց թողուլ զաննչանից և զվատաց արանց ի հնոցն զյիշատակն, և գրել միայն զքաջս ե զիմաստունս և զաշխարհակայս նախնիս, և մի՛ յանպէտս զժամանակս մեր ծախել», և զայլսն». Եվսեբիոս. «Բայց ինձ զի՞նչ ուրախութիւն և խնդութիւն բերիցէ կոչել զանուանս բարբարոսիկ բարբառոց՝ առանց արութեան ինչ և քաջութեան՝ զբռնաւորաց, վատասրտաց, թուլամորթաց, վայրենեաց»<sup>20</sup>: Շատ ավելի ճիշտ ու տրամաբանական կլինի այս հատվածները (առաջինը երկրորդի հիման վրա հորինված համարելու փոխարեն) ընկալել իբրև նույն հեղինակի (Կեֆաղիոնի) նույն մտածելակերպի երկու տարբեր դրսևորումներ:

Այժմ փորձենք մեկնաբանել Գուտշմիդի այն փաստարկները, որոնք նրան թույլ չեն տվել հատվածը վավերական համարել: Դրանք հիմնականում երկուսն են. ա) «Սուրբասի» բառարանից (X գ.) հայտնի է, որ Կեֆաղիոնն իր «Ինը Մուսաները» դրել է Ագրիանոս կայսեր օրոք, ուստի չէր կարող հրաման ստանալ մեկից ավելի թագավորներից («առաք հրաման ի թագաւորացն»): բ) Ինչպե՞ս կարող էր Կեֆաղիոնն իր «Պատմությունը» «պաշտոնական հանձնարարությամբ» ("in officiellem Auftrage") գրել, երբ այդ ժամանակ արտաքսված էր Սիկիլիա:

Բացենք այս փաստարկների փակագծերը և դրանք դիտարկենք հակառակ տրամաբանություններով: Առաջին փաստարկից հետևում է, որ միակ «թագավորն» Ագրիանոսն էր (Կեֆաղիոնն, ասում է Գուտշմիդը, չէր կարող գրած լինել հոգնակի թվով βασιλεις). ստացվում է, որ Խորենացու քաղվածքի մեջ բառը պետք է գործածված լիներ եզակի թվով, βασιλευς-ին համապատասխան, և այդպես պետք է կոչված լիներ Ագրիանոսը, որպեսզի հատվածն արժանահավատ թվար: Այսպիսի մոտեցումը տարօրինակ է, որովհետև «պրինցիպատի» ժամանակաշրջանի հունալեզու պատմագրության մեջ Հռոմի կայսրերը βασιλευς չէին կոչվում, այլ՝ Καῖσαρ («Կեսար») կամ αὐτοκράτωρ («ինքնակալ»): Եթե անգամ հանդիպում են «կայսր» իմաստով βασιλευς-ի րացառիկ կիրառությունները<sup>21</sup>, ապա դրանք շեղումներ են ընդհանուր կանոնից: Երկրորդ փաստարկից բխող եզրակացությունը նույնպես երկրայելի է. ուրեմն, եթե Կեֆաղիոնն արտաքսված չլիներ Սիկիլիա (ի դեպ, ինչպես կտեսնենք, նա այնտեղ էր ապրում ոչ կայսեր կողմից վտարված լինելու պատճառով), հավանակա՞ն է, որ նա Ագրիանոսից սլաշտոնական հրահանգ ստանար՝ գրելու հեռավոր ժամա-

20 Եւսեբի Կեսարացու ժամանակակա՞նք երկմասնեայ, մասն Ա. Վենետիկ, 1818, էջ 93-94:

21 S<sup>h</sup> H. G. L i d d e l and R. S c o t t. A Greek-English Lexicon. Oxford, 1978, s.v. βασιλευς - III.3.

նակաների (Նինոսից մինչև Ալեքսանդր Մակեդոնացի) պատմություն, այն էլ, ըստ երևույթին, ապրելով կայսրից բավական հեռու (երևում է նա փոքրասիական որևէ քաղաքի բնակիչ էր): Ի՞նչ շահագրգռություն պետք է ունենար Ադրիանոսը «պաշտոնապես» նման պատմություն պատվիրելու համար: Ավելացնենք, որ առհասարակ քիչ են եղել հունա-հռոմեական պատմիչներ, որոնք իրենց երկերը գրել են կայսրերի ուղղակի հանձնարարությամբ: Եթե շարունակենք նույն «հակադարձ» եղանակով հետևել Գուտտիլիոյի փաստարկների տրամաբանությունը, կկանգնենք փակուղու առաջ: Դժբախտարար գիտնականն ընտրել է քննադատական մեկնաբանության ու հերքման սխալ ճանապարհ, քանզի քննարկվող հատվածն Ադրիանոս կայսեր հետ կապելու որևէ հիմք չկա:

Խորենացու մեջբերման արժանահավատությունը հաստատելու ուշագրավ հնարավորություն են տալիս Փոտ պատրիարքի (մոտ 810-895 թթ.) «Գրադարանը»<sup>22</sup> և հենց «Սուրիդասի» բառարանը (Գուտտիլիոյի վկայակոչած)<sup>23</sup>, հանդամանք, որ վրիպել է ուսումնասիրողների ուշագրությունից: Փոտը (68) և «Սուրիդասը» (s.v.) կենսագրական տեղեկություններ են հաղորդում Կեֆալիոնի մասին: Պատրիարքը նաև բնութագրում է նրա երկասիրությունը՝ այն անվանելով *ΣΥΝΤΟΜΟΝ ΊΣΤΟΡΙΚΟΝ* («համառոտ պատմություն») բառացի՝ «պատմական համառոտություն»): «Սուրիդասում» այն հիշատակված է որպես *Παντοδαπας Ίστορίας* («Ամեն տեսակ պատմություններ»), իսկ Կեֆալիոնի մասին գրված է, որ նա «փախավ Հայրենիքից իշխողների (sic!) թշնամանքի պատճառով և բնակվեց Ափկլիալում» (*ἔφυγε δε τὴν πατρίδα δι' ἀπεχθείαν δυναστῶν, καὶ ἐβίω ἐν Σικελία*): Արդյո՞ք այդ «իշխողները» (*δυνασταί*, հոգնակի թվով) հենց այն «թագաւորք» չէին, որոնցից Կեֆալիոնը ստացել էր իր պատմությունը որոշակի սկզբունքով շարադրելու հրաման: *Δυναστῆς* և *βασιλευς* բառերն ընդհանուր առմամբ հոմանիշներ էին (առաջինն՝ ավելի լայն, «տեր, տիրակալ» իմաստով, երկրորդը՝ մեծ մասամբ ավելի կոնկրետ, «արքա» նշանակությամբ), կարող էին օգտագործվել մեկը մյուսի փոխարեն ու հայերեն թարգմանվել նույն «թագաւոր» բառով: Եվ եթե *βασιλεὺς*, ինչպես նշել է Գուտտիլիոյը, Ադրիանոսի օրոք գոյություն ունենալ չէին կարող, ապա դանաղան մակարդակների տերերի ու իշխողների պակասությունն անշուշտ չկար: Հետաքրքիր է, թե ո՞րն էր Կեֆալիոնի Հայրենիքը («Սուրիդասը» նրան սխալմամբ կոչում է *Γεργιθιος*, շփոթելով Կեֆալոն Գերդիսացու հետ<sup>24</sup>), և ինչու՞ էր նա ենթարկվում մեկից ավելի տերերի: Դժվար է այս հարցերին պատասխան գտնել, բայց փաստը մնում է փաստ. «Սուրիդասում» հստակ գրված է *δυναστῶν*: Կարելի է ենթադրել, որ Կեֆալիոնն սկզբում իր պատմությունը գրելու վերաբերյալ ցուցումներ էր ստացել այդ իշխողներից, հետո ինչ-որ պատճառով արժանացել նրանց անբարյա-

22 P h o t i u s. *Bibliothèque. Texte établi et traduit par René Henri*. t. I-III. Paris, 1959-1962.

23 S u i d a s. Ed. G. Bernharby. Halle, 1853, s.v. *Κεφαλιων*. Փոտի «Գրադարանի» և «Սուրիդասի» համապատասխան հատվածները տե՛ս նաև *FHG*, v. III, p. 623; *FGRHist*, Bd. II A, S. 436-437.

24 Տե՛ս *FHG*, v. III, p. 623.

ցակամությանը և ստիպված փախել Սիկիլիա. երևի միայն այնտեղ նա ավարտին հասցրեց իր սկսած «Պատմությունը»՝ արդեն ոչ պաշտոնական հանձնարարությամբ ու հսկողության ներքո: Այսպիսի բացատրությունը «Սուրիդասի» տվյալի հիման վրա միանգամայն ճշմարտանման է թվում, սակայն առաջարկում ենք նաև մեկ այլ տարբերակ:

«Առաք հրաման ի թագաւորաց»՝ կարելի է ընկալել ոչ բառացիորեն, այսինքն՝ ոչ այն իմաստով, թե Կեֆալիոնը հրաման էր ստացել մեկից ավելի «թագավորներից»: Այդ արտահայտությունը նման է ոճական, ճարտասանական հնարանքի և կարող է զիտվել իբրև հայ միջնադարյան գրականության մեջ հանդիպող «ընդհանուր տեղի» (*locus communis*): Ընդ որում պետք է նկատի ունենալ, որ թարգմանական գրվածքներում օտարալեզու տեքստերի տարբեր հատվածներ երբեմն մատուցվում էին մասամբ «հայացված» տեսքով (Կեֆալիոնի խոսքերը թարգմանել է կամ ինքը՝ Խորենացին, կամ մեկ այլ թարգմանիչ): Բացատրության այս տարբերակը հնարավոր համարելու համար հիմք կարող են ծառայել հայ ուրիշ պատմագիրների երկերում հանդիպող համանման դեպքեր: Օրինակ՝ Ագաթանգեղոսի «Պատմության»<sup>25</sup> առաջաբանում (7) գրված է, որ հեղինակին անցած դեպքերի նկարագրությունը գրել ստիպել է «թագավորների հրամանը». «...Ստիպեաց... հրաման թագաւորաց... զանցեալ իրացն եղելոց զիրս մատենագրելի»: Որոշակիորեն սա չպետք է հասկանալ որպես տարբեր թագավորների հրաման<sup>26</sup>, որովհետև այլուր, նույն առաջաբանում, նաև վերջաբանում (12, 13, 892), Ագաթանգեղոսը կոնկրետ հիշատակում է մեկ պատվիրատուի, այսինքն՝ Տրդատ թագավորին: Բերենք այլ օրինակներ. Ղազար Փարպեցին իր առաջաբանում (Ա) գրում է, որ նվիրվել է նման կարևոր դործի՝ «հարկաւորեալ հրամանաւ իշխանաց»<sup>27</sup>, մինչդեռ իր իսկ վկայությունից (Յառաջաբան, Դ), հայտնի է, որ նրա պատվիրատուն մեկ իշխան էր՝ Վահան Մամիկոնյանը: X դարի առաջին քառորդում Հովհաննես Դրասխանակերտցին նույնպես գրում է (գրքի վերջաբանում), որ անհայտ սկսել է շարագրել իր պատմությունը՝ «ի հրամանէ թագաւորաց ի վերայ հասելոյ»<sup>28</sup>: Այստեղ էլ հազիվ թե խոսք կարող է լինել առնվազն երկու թագավորից նույն պատմությունը գրելու հրաման ստանալու մասին, մանավանդ եթե հաշվի առնենք, որ Դրասխանակերտցին բազմիցս իր պատվիրատուին դիմում է եզակի թվով՝ «ո՛վ ընթերցասէրդ»<sup>29</sup>:

Բերված օրինակներից երևում է, որ երբ նշված պատմագիրները նպատակ չեն ունեցել հիշատակելու իրենց մեկենասի անունը, այլ սոսկ ցանկացել են ճարտասանական եղանակով շեշտելու նախաձեռնված գործի

25 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց. Տիգրիս, 1909:

26 Ճիշտ է վարվել Ա. Տեր-Ղևոնդյանը՝ «հրաման թագաւորաց»-ը թարգմանելով «թագավորական հրաման»: Տե՛ս Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմութիւն, աշխարհաբար թարգմանութիւնը և ծանոթագրութիւնները Ա. Տեր-Ղևոնդյանի. Երևան, 1983, էջ 13:

27 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեանց. Տիգրիս, 1904:

28 Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 362–363:

29 Նույն տեղում, էջ 12, 16, 23, 69, 111, 131, 141, 166, 228:

կարևորությունը և իրենց տրված հրամանի ոչ սովորական, այլ «արքայական» կամ «իշխանական» բնույթը, նրանք դիմել են ոճական այս ձևին՝ գրելով «հրաման թագաւորոց» կամ «հրաման իշխանաց»: Հնարավոր է, որ նույնպիսի երևույթ գոյություն է ունեցել հին հունական ու բյուզանդական գրականության մեջ, և որ «Սուրբասի» *δυναστων*-ը (հավանաբար վերցված, ուղղակիորեն կամ ուրիշ հեղինակի միջոցով, Կեֆալիոնից) հենց դրա օրինակ է: Սա առանձին հետազոտության նյութ է, որ թողնում ենք ապագային: Թվում է՝ ներկայացված հայերեն օրինակներն ինքնին բավարար փաստարկ են: Դժվար է ասել, թե ինչ է գրված եղել Կեֆալիոնին խորենացու վերագրած հատվածի հունարեն բնագրում, բայց կասկածից վեր է, որ հայերեն մեջբերման մեջ «հրաման թագաւորաց»-ը կարող է ոչ թե ուղղակի իմաստ ունենալ և վերաբերել երկու կամ ավելի իշխանավորների, այլ լինել գրական նույն Ագաթանգեղոսի, Ղազար Փարսեցու և Հովհաննես Դրասխանակերտցու կիրառած բանաձևի նմուշ:

Սյուպիսով խնդրո առարկա արտահայտությունը բացատրելու մեր առաջարկած երկու տարբերակներն էլ մոտ են ճշմարտությանը, հետևաբար Գուտշմիգի հիմնական փաստարկը թե Ադրիանոսի օրոք թագավորներ չկային, կորցնում է իր նշանակությունը:

Դիտարկենք մեջբերման մյուս մանրամասները: Կեֆալիոնն, ըստ խորենացու, ասում է, թե ուղում էր, արքունի դիվաններից օգտվելով, մանրամասնորեն գրել բոլոր ազգաբանությունները, բայց հրաման ստացավ հիշատակել միայն «գքաջս ե գիմաստունս ե դաշխարհակալս նախնիս» ու իր ժամանակն իզուր չվատնել: Կեֆալիոնին, փաստորեն, հրահանգ է տրվել լակոնիկ լինել և ավելորդ, ոչ արժանահիշատակ մանրամասների վրա ժամանակ չկորցնել: Փոտ պատրիարքի վկայություններով լիովին հաստատվում է համառոտաբանության ու ժամանակն արդյունավետ օգտագործելու այս սկզբունքը, որով առաջնորդվել է Կեֆալիոնը՝ ենթարկվելով իր պատվիրատուի (պատվիրատուների) պահանջին: Փոտը նշում է (68, p. 34a, 10), թե այս պատմագիրն իր երկր գրել է՝ «չափից շաա բավարարվելով հակիրճութամբ» (*τοῦ προσηκοντος πλέον τῆ συντομίας ἀποχρωμένως*): Իսկ Դիոդորոս Սիկիլացուն ներկայացնելիս (70, p. 35a, 5) նա լրացնում է այս բնորոշումը՝ ասելով, որ Դիոդորոսի գրվածքը նույն ժամանակների մասին պատմելիս «չատ ավելի ընդարձակ է, քան Կեֆալիոնին» (*Ἔστι δὲ πολλῶ πλεοντερος τοῦ Κεφαλίωνος*):

Որպես Կեֆալիոնի «Համառոտ պատմության» մյուս տիպական հատկանիշ Փոտ պատրիարքն ընդդրում է նրա դիդակտիկ բնույթը՝ արձանագրելով, թե Կեֆալիոնը «չի ցուցաբերում զարմանալի կամ նախանձելի ոչինչ, բացի պատմության միջոցով սովորելուց» (*οὐδ' ἄλλο οὐδὲν ἀξίον θαυμάσαι καὶ ζηλωσαι ἐνδεικνυμενος πλὴν τῆς κατα τὴν ἱστορίαν μαθησεως*): Սա նույնպես համահունչ է խորենացու մեջբերմանը, համաձայն որի Կեֆալիոնը գանց է առնում «աննշան ու վատ այրերին»: Նրանց օրինակով, եթե միտքը շարունակենք Փոտ պատրիարքի օգնությունը, որևէ լավ բան հնարավոր չէ պատմությունից սովորել, ուստի Կեֆալիոնն իր ժամանակը նվիրել է միայն օրինակելի, «քաջ, իմաստուն ու աշխարհակալ» անձանց մասին գրելուն:

Չափազանց հետաքրքիր է դարձյալ Փոտ պատրիարքի «Գրադարանի» տվյալներով հաստատվող հաջորդ վերջին մանրամասը, ըստ որի Կեֆալիոնն օգտվել է «ի դիւանացն արքունի»: Դժվար է ճշտել, թե թագավորական որ դիվաններից է իր պատմության համար նյութ քաղել Կեֆալիոնը, բայց որ նրա ձեռքի տակ եղել են անթիվ քանակությամբ աղբյուրներ (որոնք այդպես առատորեն թերևս կարող էին գոյութիւն ունենալ միայն որևէ արքունական դարեր շարունակ հավաքված գրադարանում), երևում է Փոտի հետևյալ տեղեկութիւններից (որոնք հենց իր Կեֆալիոնի նշումների կրկնութիւնն են). «[Կեֆալիոնն] այդուհանդերձ ասում է, որ իր պատմության առաջին [գիրքը] շարադրված է 570 գրվածքների հիման վրա, որոնց 30 և 1 հեղինակների է նա հիշատակում. երկրորդը՝ 25 պատմիչների 208 գրքերի, և երրորդը՝ 20 պատմիչների 600 գրքերի. ընդ սմին չորրորդը՝ 32 պատմիչների 800 գրքերի, և հինգերորդը՝ 21 պատմիչների 200 գրքերի» ([Κεφαλιων] φησι δ' ὅμως τὸν πρῶτον αὐτῶ τῆς ἱστορίας συνειλέχθαι ἐκ λόγων μὲν φο', ὧν πατέρας λ' καὶ α' ἀπομνημονευσεν· τὸν δὲ δευτερον ἐκ βιβλιων ση', συγγραφέων δὲ κε'· καὶ τὸν τρίτον δὲ ἐκ βιβλιων μεν χ', συγγραφέων δὲ κ'· τὸν μεντοι τέταρτον ἐκ βιβλιων ὧν, συγγραφέων δὲ λβ'· καὶ τὸν πέμπτον δὲ ἐκ βιβλιων σ', συγγραφέων δὲ κα')

Վեցերորդից ութերորդ «Մուսաների» համար Կեֆալիոնի օգտագործած աղբյուրների ու դրանց հեղինակների թիվը Փոտն անհասկանալի պատճառով բաց է թողնում, իսկ իններորդ «Մուսայի» համար նշում է աղբյուրների (որոնց թիվը դարձյալ բացակայում է) 30 հեղինակ (συγγραφέων δὲ τριακοντα) (68, p. 34a, 20–30):

Λόγος և βιβλίον այստեղ երևի պետք է հասկանալ ոչ թե որպես ամբողջական երկասիրութիւն, այլ դրա առանձին մաս, «գիրք», ինչպես իր իսկ Կեֆալիոնի պատմության ինը «գրքերը»: Այնուամենայնիվ ակնհայտ է, որ այսպիսի թվով հին դրվածքներ Կեֆալիոնի համար կարող էին մատչելի լինել որևէ նշանակալից «դիվանում», որից նա հնարավորութիւն կունենար օգտվելու միայն աղբյուրիկ մի իշխանավորի (իշխանավորների) միջնորդությամբ կամ թույլտվությամբ:

Այս ամենը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ կորած «Ինը Մուսաների» «գլուխներից մեկից» («ասէ ի միում գլխոցն») Մովսես Խորենացու քաղած հատվածի իսկութիւնը խորենացիագետների կողմից հերքվել է անիրավացիորեն: Հնարավոր չէ պարզել, թե ինչ լեզվով և ինչպես է հատվածը հասել Խորենացուն, ամբողջական տեքստի հետ մեկտեղ, թե՞ որպես առանձին պատառիկ (իրականութեանն ավելի մոտ է թվում երկրորդ Հնարավորութիւնը), սակայն մեջբերման մանրակրկիտ քննութիւնը և մաս առ մաս դուրագրումն օժանդակ ստույգ աղբյուրների հետ հաստատում է, որ այլուր սփռված արժանահավատ հատվածների կողքին պետք է դնել նաև այս մեկը: Դա կնշանակի վերադառնալ Կ. Մյուլլերի տարբերակին՝ հրատարակված Գուտշմիդի ուսումնասիրութիւնից առաջ, և մերժել Յ. Յակոբիի մոտեցումը: Այն, որ Եվսեբիոսի «Ժամանակագրութեան» մեջ դրսևանում է մի համանման տեղի (որ ոչ մի դեպքում չի կարող բառացի զուգահեռ համարվել), ավելի շուտ ոչ թե բացառում, այլ հաստատում է Կեֆալիոնին վերադրված խոսքերի վավերականութիւնը, քանզի այդ եր-

կու հատվածները լրացնում են միմյանց՝ առավել ամբողջական պատկերացում տալով ուչ անտիկ պատմագրի որդեգրած համառոտարանության սկզբունքի և հիշարժանության չափանիշի մասին:

ОБ ОДНОЙ ЦИТАТЕ МОВСЕСА ХОРЕНАЦИ  
("Об этом свидетельствует и Кефалион...")

ԱՐԱՄ ԹՕՒՇՅԱՆ

Р е з ю м е

В главе I, 5 "Истории Армении" Мовсеса Хоренаци примечательны упоминание историографа Кефалиона и цитата из его утерянного сочинения. Этого отрывка нет среди сохранившихся фрагментов Кефалиона на греческом языке: он дошел до нас благодаря Мовсесу. О цитате Хоренаци в научной литературе до последнего времени доминирующим было мнение А. фон Гутшмида. Приводя конкретные аргументы, он пришел к выводу, что отрывок, приписанный Кефалиону, не является подлинным, а сочинен Мовсесом с помощью одной из ссылок на Кефалиона в "Хронике" Евсевия. Фактически принимая этот вывод как окончательный, арменисты не считали нужным пересмотреть отрывок, а довольствовались повторением, более или менее точным, мнения Гутшмида. Внимательное рассмотрение его высказываний обнаруживает, что аргументы Гутшмида, кажущиеся на первый взгляд логичными, являются неприемлемыми и не дают ключа к решению проблемы. Учеными оставался незамеченным тот факт, что биографические сведения о Кефалионе в словаре "Свиды" и у патриарха Фотия могут подтвердить достоверность отрывка. Некоторые другие соображения также наводят на мысль, что цитата Мовсеса Хоренаци из "одной главы" книги Кефалиона является подлинной.

ON A CITATION OF MOVSES KHORENATS'I  
("Cephalion is also a witness to these matters...")

ԱՐԱՄ ԹՕՒՇՅԱՆ

S u m m a r y

In chapter I, 5 of Movses Khorenats'i's *History of Armenia*, the reference to the historiographer Cephalion and the citation from his non-extant work are noteworthy. The passage is not found among the preserved fragments by Cephalion in Greek; it is extant thanks to Khorenats'i. Until recently, A. von Gutschmid's opinion about Movses' quotation has been predominant in scholarly literature. He has adduced certain arguments, concluding that the passage ascribed to Cephalion is not authentic: it has been invented by Movses with the help of one of the references to Cephalion's writing in Eusebius' *Chronicle*. In fact, considering his conclusion final, armenologists have not deemed it necessary to review the passage but have contented themselves with repeating, more or less exactly, Gutschmid's opinion. An attentive reconsideration of his statements reveals that, although Gutschmid's arguments seem to be logical at first glance, they are unacceptable and do not afford the key to the solution of the problem. Scholars have not noticed the fact that the biographical information about Cephalion in the *Suidas* lexicon and by the Patriarch Photius may corroborate the authenticity of the passage. Other considerations, too, suggest that Movses Khorenats'i's citation from "one chapter" of Cephalion's book is genuine.